№ 1 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ 1900

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻՍ ՄԷՋ

—

Այս տարին փի դարու վերջն է և խօսելով առողջապահական գրականութեան մասին, անհնար է մի երկու խօսք չասել ընդհանրապէս գրականութեան մասին Հայերիս մէջ։ Թիւրիմացութեան տեղիք չըտալու համար իսկոյն և եթ ասեմ, որ ես խօսելու եմ միայն գրականութեան անբաւարար գրութեան մասին և ոչ նրա գրական կողմերի։

Այո, երևում է որ «ազգերին առաջադիմէ կոր», ինչպէս վաղեմի ասած է, բայց վայ այն առաջադիմութեանը։ «Առաջադիմէ կոր», որովհետև անշուշտ փի դարը բաւականաչափ հարստացրեց մեր գրականութիւնը, համեմատաբար նախընթաց փԸ դարուն, երբ բացի «Պղնձէ խաղաթից» և այլ մի քանի ծռտի-պռտի բաներից ժողովուրդը ոչինչ չունէր կարդալու. նոյն իսկ իր բանուկ լեզուն ժողովուրդը չէր գտնում թղթի վրայ և մեր թոփիչ եկեղեցական սրբազան բանաստեղծութիւնը սոսկ աստուածային լեզու էր նրա համար։

Պատմական հայութիւնը, այն որ այսօր միանգամայն մոռացած է, որպէս ուշադրութեան անարժան մի առարկայ իր «անկիրթ ու անուսում» տեղովը, դարերի ընթացքում թողել է իր մտքի և հոգւոյ ծնունդը բազմահատոր մատեանների մէջ, որոնցով լցած են աշխարհիս շատ ու շատ գրադարանները առատ կամ նւազ չափով, դեռ մի կողմ թողած մեհենական գրականութիւնը, որը իսպառ անհետացած է, նաև անթիւ մատեաններ, որոնք այրւած են, խորտակւած, գետնի տակ անճանօթ թաղւած և այլն և այլն։

Այսպէս թէ այնպէս, փի դարը ներկայանում է մեզ, մի յայտնի տեսակէտով, իբրև վերածնութեան դար. խօսքս հայերի վերաբերմամբ է, ի հարկէ։ Այս դարն է որ լոյս աշխարհ քաշեց գրականութիւնը վանքի բրջերից, սա է որ մեզ հաղորդակից արեց հանուր մարդկային մտքի ծննդին, տալով մեզ և բազմաթիւ գրագէտներ և նոր ու ասենք ճոխ գրականութիւն և անւանի գիտնականներ և միւս կողմից այս դարն է, որ ծանօթացրեց աշխարհին հայ ապգի հետ։ Ո՞վ էր լսել որ հայ կինը իր մտքերը թղթին յանձնի և վստահաբար հասարակութեան առաջը բերի, այդ ևս տեսանք։

Ինձ թւում է թէ գրականութեան նշանակութիւնը բաւականաչափ ճանաչւած չէ բազմութեան կողմից։ «Ազգ գայ եւ ազգ երթայ», սակայն գրականութիւնն յաւիտեան կայ։ Ինչո՞վ է խօսում մեզ հետ Մովսէս և Ահարոնը, ինչո՞վ Փարաւոնը, ինչո՞վ հայի պապ հետիտները, ինչո՞վ Հռովմայեցին, յոյնը և այլն և այլն, եթէ ոչ գրականութեամբ՝ մէկը Աստւածաշունչ գրքի միջոցաւ, միւսը պապիռուսի, երրորդը պիրամիդների, ժայռերի, վաղաղաթի և այլն միջոցաւ։ Ընորհիւ այդ գրականութեան, մենք այդ հոդ դարձած ազգերին տեսնում ենք, լսում, հասկանում։ Եւ շատ ու շատ ազգեր, որոնք գրականութիւն չեն ունեցել, իսպառ անհետացել են աշխարհի երեսից, մի խորտակւած նաւի ալիք անգամ չըթողնելով, իբրև գոյութեան նշան։

Արդ՝ ինչ արեց փի դարը համեմատաբար իր դըղըրդուն անւան։ Ս. Էջմիածնու մատենադարանը մըննաց նոյն դարանի տեղին և այլ ամենն ըստ նոյն

կսրզի։ Ո՞ւր են մեր գիտնականները, թէ աշխարհական, թէ հոգևորական. ո՞ւր է ժողովրդի բարեկամ բանիմաց Հայը, ո՞ւր մեր Հարուստները։ Եթէ չըլինէին նրանք, մենք չէինք տրտմիլ, կասէինք պատմական Հանգամանքը մարդիկ չէ տւել, յոյսներս կըդնէինք ապագայի վրայ. բայց չէ որ Ռուսիոյ մարդասէր քաղաքականութիւնը, որով նա իր բազմասէր, բազմալեզու որդւոյը մատակարարել է խաղաղութիւն և Հանգիստ, տւել է և Հայերին գործունէութեան լիակատար ասպարէզ և Հայերը, ի պատիւ իրանց ասենք, գիտացին օգտւիլ այդ դրութիւնից և արտադրեցին ուսեալ անձանց մի բաւական քանակութիւն գիտութեանց և արւեստից զանազան ասպարէզներում։ Կամենում էք Հայ նկարիչ, —կայ,—բժիշկ, ճարտարապետ, օրէնսգէտ, Հարբսութիւն, խելք, գիտութիւն, ճարպիկութիւն և այլ և այլ չըզիտեմ ինչ կայ, ամեն բան կայ և շատ կայ։ Բայց ո՞ւր է նրանց գոյութեան նշանը. նրանք գոյութիւն ունին, իբրև անհատներ, բայց իբրև հաւաքական ոյժեր աւա՛ղ, ոչինչ չեն ներկայացնում. ընդհանուր ազգային դանձարանը ոչինչ չեն ներմուծում։ Ի՞նչ դարու Հայ ազգը գրականական ասպարիզում արել է այն, ինչ որ կարող էր անել մի ազգ, ունենալով նրա ոյժերի տասից մէկը, եթէ ոչ նւազագոյն և։

Մենք չենք վախում պարզ խօսելուց, ասենք ուղղակի որ մեր բանիմաց դասը ինքնաճանաչ չէ, որ նա Հեռացել է իր ազգից, կապը կամ սաստիկ թուլացրել է, կամ խզած կտրել նրանից։ Շատ լաւ, դա ճաշակի բան է, բայց թո՛ղ սա անուն գըրաւեր իբրև Ռուսիոյ Հանճար, իբրև Անգլիոյ Հանճար, վերջապէս իբրև մի կոսմոպոլիտ Հանճար—աւա՛ղ չըկան այդպիսիք, խօսքս բացառիկ դէպքերի մասին չէ։ Եւ բնական է որ չըլինին, որովհետև բոլորը վարակած են մի կենդրոնախոյս ոյժով...

Հայ գրականութեան ասպարիզում տիրում է ոմն ոչ պակաս ոյժով, քան նրա պատմական Հայրենիքի երեսին։ Վերցրէք լեզւի մշակութիւնը և Հետազոտութիւնը, վերցրէք ազգագրական մասը, Հնագիտական, մատենագրական և այլ ամեն գիտութեանց մասերը՝ ամայութիւն ամենուրեք, այն ինչ «հուշիմ բազում են»։

Պատմագէտներին եմ թողնում գիտութեանց և արւեստից բազմազան ճիւղերը և խօսքս մասնաւորացնում եմ բժշկականութեան վրայ։

Անշո՛ւշտ, Հայ ազգը նոյնպէս բժշկել է, երբ Հիւանդ է եղել, բայց ովքե՞ր են եղել նրա բժիշկները, ինչո՞վ են բժշկել նրանք։ Ի՞նչ առնչութիւն է ունեցել Հայ բժշկականութիւնը արևելեան այլ ազգերի բժշկականութեան Հետ, ունեցե՞լ է նա որ և է ինքնուրոյնութիւն։ Չէ՞ որ յայտնի է, որ վահագնի Հարս Աստղիկ չաստւածուհին երբ զբօսնում էր Հայաստանի լեռներում, ամեն մի ծաղիկ ու բոյս լեզու էր լինում ու ասում թէ ի՞նչի դեղ է նա։ Զարգացե՞լ է արդեօք Աստղիկի բժշկականութիւնը ազգի տւարտղութեան շրջաններում։ Գոյութիւն է ունեցել արդե՞օք և այսպէս ասած գիտական բժշկականութիւն, թէ՞ միայն ժողովրդական, որ և է ռամկական։ Ի՞նչ կապ է ունեցել բժշկականութիւնը ազգի կրօնի Հետ, նրա սնոտիապաշտութեան և այլ Հանգամանքների Հետ։

Վերջապէս՝ ի՞նչի մէջ է կայացել Հայ բժշկական գրականութիւնը, ի՞նչ է կորել և ի՞նչ մնացել։ Կամ ի՞նչ է ներկայացնում արդի Հայ բժշկականութիւնը նրա բնակութեան զանազան աշխարհագրական կենդրոններում։

Ինչ ասել կուզի որ բժշկականութիւնը, բնախօսութիւնը, մարդակազմութիւնը, բնագիտութիւնը և քիմիան նոյնպէս և ազգագրական Հաղար ու մի Հարցեր սերտ կապերով կապւած են առողջապահութեան Հետ՝ առանց առաջինների չըկայ և վերջինը։ Ապա ուրեմն առողջապահական գիտութիւնը, այդ գիտութիւնը, պէտք է դրազրի բոլոր այդ Հարցերով, որոնց վրայ խօսքս և Հիմնւում է նա և որոնցից իր ծնունդն է առնում։

Թէև Հայ ազգի յաւերը և մեղքերը շատ են՝ «զորն ասեմ, կամ զորն խոսովանեմ», բայց չէ՞ որ մի սրև է ծայրից պէտք է սկսել և այս տեսակէտով մենք ողջունում ենք «Տարազը», որ նա բարի միտք յղացաւ ընդլայնել իր էջերը առողջապահական խնդիրների Համար։ Այս Հանգամանքը մեծամեծ բարեաց պատճառ կարող է լինել մեր ժողովրդի Համար, որը երևակայել չէ՛ք կարող թէ որչա՛փ անգէտ է առողջապահական գաղափարներին... Տարազի էջերը կրբերի ձեզ պատկերներ և գուք ապշած կըմնա՛ք, տեսնելով այն վայրենի Հայեացքները, որոնք ապրում են և ծաղկում ձեր շուրջը, ձեր Հարևան—բարեկամների մէջ։

Ի՞նչ է բերել ցեցն իմ ձմեռւայ վերարկուի գըլխին, նոյնն անում են հիւանդութիւնները անհատի և մի ազգի գլխին։

Ես չըհեռացայ խնդրից, ասելով հիւանդութիւնները, որովհետև հիւանդութիւնը առողջապահական օրէնքների բացակայութիւնից է. այնտեղ է թագաւորում հիւանդութիւնը, ուր բացակայ է ա-

առողջապահութիւնը, որպէս խաւար և լոյսը: Մեր մէկ անհշան գլուխկի մէջ բացատրել ենք թէ ինչ է բնական մահը և ինչ անբնական. ահա առողջապահութեան գիտութիւնը անբնական մահի մատակարարն է մարդկային ցեղին:

Հասկանալի է, ուրեմն թէ մենք որ աստիճանի բարիք ենք սպասում մեր ժողովրդին «Տարազի» էջերից, եթէ միայն Հայ Հիպոկրատները չեն դանալ իրանց լուման ձգելու ազգային առողջապահութեան գանձարանը:

Բժշկապետ **Ռ. Նաւասարդեան**

ՁԻԱՁԱՒՈՒԹԻՒՆ

(Serotherapie)

Բժշկութեան դէմ կուղների թիւը քիչ չէ, պակաս չեն նոյնպէս և թերահաւատները. մինչդեռ գիտական և կենսական ոչ մի ասպարիզում թերահաւատութիւնը այնքան վտանգաւոր չէ իր վտանգներով, թէ անհատի համար և թէ գլխաւորապէս հասարակութեան համար, ինչքան որ բժշկութեան վերաբերեալ: Բայց հասարակութեան վստահութիւնը վաստակելու համար բաւական չէ, որ ցոյց տանք բժշկութեան հակառակորդների և թերահաւատների տեսական թերութիւնները, այլ պէտք է միևնոյն ժամանակ ծանօթացնել նրան այն առաջադիմութիւնների հետ, որ կատարւում է օրէցօր բժշկականութեան բոլոր ճիւղերում: Այդ օգտակար է, մենք այսօր պիտի խօսենք մեր ընթերցողների հետ շիճաբուծութեան (Serotherapie) մասին: Սեղանիս առաջ նըստած դժւար չէ ինձ երևակայել, թէ ինչպէս ընթերցողիս դէմքը այս նոր թխւած բառը կարդալիս հարցական նշանի վերածուեցաւ, ուստի նախ և առաջ բաւականանանք ծանօթանալ նրա ինչ լինելուն հետ. խօսենք նրա ծննդեան մասին, որով և կըբացատրւի նրա անունը, և ապա կըխօսենք այն առաջադիմութիւնների մասին, որ տեղի ունեցաւ այդ ասպարիզում վերջին ժամանակներս: Ուրեմն ուշադրութիւն!

Փիտնականները երկար ուսումնասիրութիւններից յետոյ եկան այն եզրակացութեան որ եթէ մի կենդանու օրգանիզմի մէջ մտցնէք քիչ քանակութեամբ միկրոբներ և կրկնենք այդ դործողութիւնը մի քանի անգամ, կարող էք փորձի ենթարկած կենդանուն ապահովել այդ միկրոբի առաջ բերած հիւանդութիւնների դէմ: Այդ պատւաստումը տեղի է ունենում հետևեալ կերպ: Երբ որ մի կենդանի պատւաստւում է մի որևէ վարակիչ հիւանդութեան դէմ, այդ կենդանու արեան բազմաթիւ յատկութիւններ վրայ աւելանում է մի նոր և շատ նպաստաւոր յատկութիւն, այն է արդելք լինել այդ հիւանդութիւնն առաջ բերող միկրոբների զարգացման: Ուրիշ խօսքով, եթէ մի կենդանի մի որևէ վարակիչ հիւանդութեան խոյս տալու պատիւն է արժանանում, եթէ նա ապահովւում է այդ հիւանդութեան դէմ, դա լինում է շնորհիւ այն փոփոխութիւնների, որ տեղի են ունենում արեան մէջ պատւաստւելից յետոյ: Բայց այդ դեռ բոլորը չէ. ամենագլխաւոր կէտը այն է, որ արեան այդ ապավարակիչ (immunisante) յատկութիւնը այնքան ուժով է, որ եթէ այդ արիւնից մի փոքրիկ քանակութիւն մտցնենք չըպատւաստած կենդանու արեան մէջ, այդ փոքրիկ քանակութիւնը բաւական է, որ երկրորդ կենդանին էլ օժտւած լինի առաջինի նոր յատկութիւնով, այսինքն միևնոյն վարակիչ հիւանդութեան դէմ ապահովւած լինի. երկրորդ կենդանին էլ ապավարակեալ կըլինի, ինչպէս առաջինը:

Ապավարակեալ կենդանիների արեան այդ յատկութիւնը առաջին անգամ նկատած են պ. պ. Ch. Richet և J. Héricourt և այդ գիւտը տեղի ունեցաւ Պարիզի համալսարանի պատերի մէջ.

Այդ երկու պարոնները ուսումնասիրում էին միայն վարակիչ հիւանդութիւնը ճագարների վերաբերութեամբ և որից խոյս էին տալիս շները. երբ նրանք նկատեցին, որ եթէ մըտցնելով շների օրգանիզմի մէջ այդ հիւանդութեան միկրոբը, պատւաստենք այդ շները և ապա առնելով այդ պատւաստւած շների արիւնից մի փոքրիկ մաս և մտցնենք նրան ճագարի մարմնի մէջ, վերջիններս էլ, ինչպէս և շները այլ ևս չեն ենթարկւում այդ հիւանդութեան:

Ապավարակում առաջ բերելու այդ նոր մէջոցի մասին 1888 թւին երկու հեղինակները յայտնեցին Պարիզի բժշկական կաճառին: Բայց քիչ ժամանակի մէջ նոյն հեղինակները նկատեցին որ ապավարակում (immunisanté) առաջ բերող նիւթը գտնւում է արեան շիճի (serume) մէջ միայն և ոչ արեան գնդակների ու կամ մակարդուղ նեարդերի մէջ. այդ պատճառով շարունակեցին իրանց փորձերը զործածելով իբրև ապավարակիչ նիւթ պատւաստւած կենդանիների արեան միայն շիճը, որտեղից և ծագեցաւ շիճաբուծութիւնը:

Պ. պ Richet և Héricourt իրանց առաջի աշխատութեան մէջոցով կաճառին յայտնած էին, որ բժշկական այդ նոր դրութիւնից ներշնչւած իրանք ձեռնարկել են իմիսերկիլոզի դէմ ապավարակիչ նիւթ փնտրել և մինչդեռ իրանք աշխատում էին այդ ուղղութեամբ, նոր դրութիւնը անցնելով փորձնական սահմանները, մեծ ընդունելութիւն գտաւ իտալական և գերմանական գիտնականների կողմից, ուր սկսեցաւ փորձեր գանազան հիւանդութիւնների համար:

(Կըշարունակի)

Ռ.Ժ. Ե. Մ.

Ծծկեր մանկան խնամատարութիւնը եւ երեխայի առողջապահական դաստիարակութիւնը

(Դր. Շմիթց)

1. *Մօր սրինգով երեխային կերակրելու անհրաժեշտութիւնը*

Նորածին մանուկը որ աշխարհ է գալիս առանց որևէ նեցուկի և ինքն իրան կերակրելու հնարաւորութեան, կարող է յոյս դնել միայն իր մար

վրայ, ճնութիւնից պարգևատրուած մայրական սիրոյ ուժով, մայրը հովանաւորում է իր երեխային, իսկ, շրնորհիւ իր կաթնային գեղձերում եղած սննդարար հիւթի, կարող է, կերակրել նրան։ Սրանից հետևում է որ ոչ մի մայր չըպէտք հրաժարի երեխային իր կրծքով կերակրելու պարտաւորութիւնից, եթէ առանձին պատճառներ չեն պահանջում այդ բանը։ Նոյն իսկ ծնութիւնից կարգադրուած այդ սպարտաւորութեան անտես առնելը կարող է ինչպէս իրան մօր, նոյնպէս և երեխայի հիւանդանալու պատճառ դառնալ։

Եթէ մայրը իր ժամանակին ծիծ չէ տալիս երեխային, ապա դրա հետևանքը լինում է ստինքի հիւանդութիւնները, որը ծննդաբերութիւնից յետոյ երկրորդ կամ երրորդ օրում փոխւում է այսպէս կոչուած «կաթնային տենդի»—հիւանդութիւն, որի հետ միասին լինում է բարեխառնութեան աւելացում։ Որովհետև մօր օրգանիզմը յղութեան ժամանակ խիստ յորդառատ է լինում հիւթերով, ապա ծնութիւնը հոգում է այս մասին, որպէսզի հիւթերի հոսանքը դարձնի դէպի կրծքի գեղձերը, ուր ամբարւած սննդարար հիւթը բաժանւում է մօր օրգանիզմից կաթի առատ տարորոշման շնորհիւ, որով լաւանում է ծննդկանի ինքնազգացութիւնը և առողջութեան դրութիւնը։ Կաթնային տենդի առաջը կարելի է առնել իր ժամանակին մօր կրծքին դնելով երեխային։ Ես խորհուրդ եմ տալիս այդ անել անյապաղ, առանց այնքան էլ սպասելու, մինչև որ շատ կաթ հաւաքւի։ Եթէ մինչև անգամ թւի, որ կրծքի գեղձերում դեռ բոլորովին կաթ չըկայ, դարձեալ, այնուամենայնիւ երեխային պէտք է դնել կրծքին, որովհետև ծծելը այնպիսի գրգիռ է առաջ բերում կրծքի գեղձերի վրայ, որ զարթեցնում է նրանց գործունէութիւնը։ Շատ անդամ ուղղակի հիանալի է, թէ ինչպիսի ահագին քանակութեան կաթ է պատրաստւում այնպիսի մայրերում, որոնք ձեր թախանձանքով ծիծ են տալիս երեխային և որոնց մէջ սկզբում, ըստ երևութին, բոլորովին կաթ չըկար։ Կաթ ստանալու չլշեալ եղանակը միակ կանոնաւորն է և միւս միջոցներից լաւ է օգնում։

Բացի դրանից երեխային կերակրելը պաշտպանում է մօրը մի քանի հիւանդոտ խանգարումներից, ինչպէս են ստինքի հիւանդանալը, այդ գեղձերի մէջ առաջ եկած պնդութիւնը և այլն։

Այդ պատճառով ամեն մայր պարտաւոր է յօգուտ իր և մանկան առողջութեան կերակրել վերջինին իր կրծքով, չզրկելով նրան այնպիսի կերակրից, որ ամենից աւելի նպատակայարմար է նրա զարգացման և պահպանութեան համար։

Հրաժարւել իր երեխային կերակրելուց, չըցանկանալով զրկւել զարճութիւններից միշտ երեխայի մօտ լինելու անհրաժեշտութեան պատճառով, կամ ուրիշ չնչին շարժառիթներից, բացէ ի բաց յանցանք է, և ի նկատի ունենալով այն վտանգները, որոնց ենթարկւում է երեխան արհեստական կերպով կերակրելիս, վերին աստիճանի անպարկեշտութիւն է։ Վիճակագրութիւնը ապացուցանում է, որ մայրական կաթով կերակրւած 100 երեխաներից մեռնում են միայն 8-ը, իսկ արհեստական ճանապարհով կերակրւած 100 երեխաներից մեռնում են 30-ը։ Սրանից երևում է թէ ինչ ծանր յանցանք է յանձն առնում այն մայրը, որ հրաժարւում է իր մայրական պարտաւորութիւնները կատարելուց։

Հասկանալի է, որ կարող են այնպիսի պայմաններ առաջ գալ, որոնք մինչև անգամ արգելում են մօրը երեխային իր կրծքով կերակրել։ Կըյիշեմ, օրինակ, ստինքի բորբոքման մասին։ Հիւանդացած կրծքի կաթը կարող է վնասել երեխային, այդ պատճառով էլ վերջինին չըպէտք է կերակրել նրանով։ Յետոյ մօր կաթի վրայ վատ ազդեցութիւն են անում մօր ընդհանուր հիւանդութիւնները, առանձնապէս ծննդականութեան տենդը, թոքախտը, վարակիչ հիւանդութիւնները։ Այդ պատճառով էլ այդ դէպքերում մօր կերակրելը իր երեխային մինչև անգամ ուղղակի վտանգաւոր է դառնում այդ վերջինի համար։

Այն հարցը, թէ մայրը պէտք է կերակրէ մանկանը թէ ոչ, պէտք է բժշկի վճռին թողնել, և միայն բժշկի, որը քննելով մօր դրութիւնը և նրա կաթի յատկութիւնը, կարող է որոշել, թէ արդեօք վնասակար է կերակրելը նրա կամ նրա երեխայի համար։

ԵՐԵԽԱՅԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ ՄԻՆՉԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԱՄԻՍԸ

Մօր կաթով.

Մօր կրծքից եկած առաջին կաթը սովորականից բարձր է. այդ պատճառով մայրերից ոմանք սկզբում հեռու են պահում իրանից երեխային կերակրելուց, այլ կաթը մատերով են դուրս բերում։ Այդպիսի մայրերը անխոհեմ կերպով են վարւում հետևեալ պատճառով։ Նորածին մանկան ադիքային խողովակը սովորաբար խիստ լիքն է լինում քակորով. այդ մածուցիկ նիւթերի դատարկելը յաճախ երեխային ցաւեր է պատճառում, որով մեծ մասամբ բացատրւում է նորամանուկի լացը։ Միևնոյն ժամանակ առաջին մայրական կաթը ապդում է ինչպէս թեթև լուծողական։ Սրանից ակներև է, որ անխելքութիւն է զրկել նորամանուկին և առաջին կաթից, և առաւել ևս անխելքութիւն է դրա փոխանակ տալ արհեստական լուծողականներ։ Վերջինները որքան էլ թեթև կերպով չըներգործէին, այնուամենայնիւ այդպիսի միջոցների անսովոր երեխայի մարսողութեան գործարանների քնքոյշ լորձային թաղանթը վնասւում է դրանից և հետևանքը լինում է մարսողութեան խանգարումը։ Ընդհանրապէս պէտք է արմատախիլ անել ծծկեր երեխաներին լուծողականներ տալու վատ սովորութիւնը, որոնք եթէ մինչև անգամ երեխան նրանցից չի էլ հիւանդանում, այնուամենայնիւ վնաս են պատճառում նրանով, որ մանկան օրգանիզմը սովորում է նրանց, և աղիքները կորցնում են իրանց գործունէութիւնը, այնպէս որ երեխան սկսում է տանջւել որովայնապնդութիւնից։ Եթէ հարկաւոր է լինում արհեստական ճանապարհով դատարկել երեխայի փորը, ապա ամենից լաւ է այդ անել ջրով դաստուր անելով։ Դրա համար գործ են ածում փոքրիկ սրսկիչ՝ գնդաձև ծայրով։

Մայրը պէտք է կերակրէ իր երեխային միայն այն ժամանակ, երբ սա կերակրի կարիք է զգում։ Մանուկը, զգալով քաղց, իր ստամոքսի դատարկութեան մասին իմաց է տալիս նրանով, որ բերանը այս ու այն կողմն է դարձնում։ Եթէ այդ ժամանակ նա կշտանում է, ապա անցնում է մօտ երկու ժամ, մինչև որ ստամոքսը

մարսում է ընդունած կերակուրը և հեռացնում է նրան դէպի աղիքները։ Եթէ մանուկը աղաղակում է, այդ դեռ մայրը քաղցածութեան նշան չըպիտի համարէ, երբ որ կանոնաւոր կերպով որոշեալ ժամանակամիջոցներում կերակրում է։ Պարզ փորձը շուտով համոզում է մօրը կրկին կերակրելու անհրաժեշտութիւնը կամ անկարևորութիւնը։ Եթէ առողջ, զարթ երեխան լիքը ո՛մպերով չէ ծծում, ապա այդ իբրև ապացոյց է ծառայում այն բանին, որ նրա անհանգիստ դրութեան պատճառը քաղցը չէ։ Այդ պատճառով մայրը խիստ անխոհեմութիւն է անում, եթէ միշտ պինդ է տալիս երեխային, որովհետև նա սովորում է դրան և մօրը հանգիստ չէ տալիս։ Առաջին ամիսներում երեխային պէտք է կերակրել և դիշերը, որովհետև նրա մարմինը կարիք է զգում համեմատաբար առատ կերակրի։ Աւելի ուշ՝ խոհեմութեամբ վարուելով կարելի է երեխային դիշերւայ կերակուր ընդունելու սովորութիւնից ձեռք քաշել տալ և այդ պիսով ապահովել իր դիշերային հանգիստը։

Որպէս զի երեխայի բերնում մնացած կաթի տարրալուծման առաջն առնուի, որ կարող է մարսողութեան գործարանների հիւանդանալու պատճառ դառնալ, մայրը պէտք է ամեն մի կերակրելուց յետոյ լաւ մաքրէ երեխայի բերնի խոռոչը։ Դա լինում է հետևեալ կերպով։ Յուցամատի վրայ պէտք է ամուր փաթաթել մի թաց քաթանի կտոր, որով սրբւում է լեզուի և բերնի լորձային թաղանթը մինչև անցքը։ Երեխաները խիստ հեշտութեամբ վարժւում են դրան և մինչև անգամ նրանց քունն չէ խանգարւում, եթէ այդ նրանց անում են քնած ժամանակ։

Անկողնում պարկած մօր համար երեխային կերակրելու ժամանակ լաւագոյն դրութիւնը—կողքանցն է, որի ժամանակ երեխան այն ձեռքն է առնում, որին մայրը չէնում է, որովհետև այդ ժամանակ պտուկը լինքը իրան գալիս է դէպի երեխայի բերանը։ Մայրը երբէք իրան թոյլ չըպիտի տայ քնել կերակրելու ժամանակ։ Բանը նրանումն է, որ քնած ժամանակ ծանր կուրծքը կարող է ծածկել երեխայի բերանը և քիթը, որով նա կարող է խեղդւել։

Մայրը պէտք է երեխային կերակրէ իր կրծքով մինչև ութերորդ ամիսը։ Մինչև այդ շրջանը մօր կաթը ամեն կողմից բաւականութիւն է տալիս իրան արւած պահանջներին, որովհետև նա ունենում է իր մէջ այնպիսի սննդարար նիւթեր, որոնք անհրաժեշտ են մանկան մարմնի զարգացման համար։ Իբրև ապացոյց ծառայում է այն ծծկեր մանուկների առողջ տեսքը, որոնց մայրերը ունենում են բաւականաչափ քանակութեան կաթ։ Անհրաժեշտ է ապացուցանել այն տխուր փաստը, որ խիստ շատ մայրեր անկարող են լինում մինչև ութերորդ ամիսը կերակրել իրանց երեխաներին—փաստ, որ ոչ պակաս աստիճանի կախումն ունի ժամանակակից սերնդի անկարողութիւնից, որի ոյժերը ջլատւում են կեանքի ծուռ եղանակից, դաստիարակութիւնից և մոդայից։ Վերջինի վերաբերմամբ մատնացոյց կանեմ մէջբը կորսէտով ամուր հռւպտալու վատ սովորութեան վրայ, որ այնքան խոչընդոտ է հանդիսանում կրծքի զեղձերի կանոնաւոր զարգացմանը, որ նրանք ապագայում չեն կարողանում կատարելապէս ցոյց տալ իրանց գործունէական ընդունակութիւնները։

ԻՆՉՈՒ ԵՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՒՄ ԿԱՆԱՑՔ

Տարէցտարի թոյլ և հիւանդ կանանց թիւը յայտնի կերպով բազմանում է քաղաքներում, այն էլ մեծ մասամբ կրթւած դասակարգի մէջ։

Այդ յուսահատական երևոյթը ճշմարտութիւն կարելի է համարել, որովհետև արդէն բժիշկներով հաստատւած փաստ է։

Ի հարկէ, այդ հիւանդութիւնների պատճառները շատ են, բայց այդ բոլոր պատճառների մէջ ամենագլխաւորն է մարմնի քիչ շարժողութիւնը, որ անհրաժեշտ է կանացի կազմւածքի կանոնաւոր զարգացմանը։ Մանաւանդ մեր օրերում, երբ կեանքի պայմանները կանանց հարկադրում են իրանց ժամանակն մեծ մասամբ անցկացնել կամ անշարժ նստած պրպւած մտաւոր աշխատութեամբ կամ տնտեսութեամբ կամ երեխաների առողջապահութեամբ պարապելով, և այլն և այլն։ Համարձակ կարելի է ասել, եթէ կանայք ֆիզիքական մարմնամարզութեան անհրաժեշտութիւն ճանաչէին եւ այդ շարժողութիւնը կանոնաւոր կատարէին, ինչպէս որ պահանջում է այն առողջապահական կանոնները, այդ ժամանակ շատ անդամով պակաս կըլինէր թոյլերի և հիւանդների թիւը, և շնորհիւ այդ շարժողութեան, կանանց մկանունքները կամրապնդէին, նիւթեղէնի փոխանակութիւնը, արեան շրջանադարձութիւնը կազմւածքի մէջ կանոնաւոր կըկատարւէին և նեարդային համակարգութիւնը ճշտութեամբ կըներգործէր ու այդպիսով մենք ձեռք կըբերէինք առողջութիւն թէ հոգոյն թէ մարմնոյ համար, որ ամենաոխերիմ թշնամի է թուլութեան և հիւանդութեան, բայց հաւատարիմ պահապան մեր առողջութեանը։ Առոյգ կազմւածքը ընդգիմութիւն ցոյց կըտար հիւանդութիւններից գոնէ շատերին և յամենայն դէպս զգալի կերպով նրանց հետևանքը կըթուլացնէր. բացի այդ, յետագայ սերնդի մէջ առողջ մայրերից կըծնէին առողջ զաւակներ, որ գժբախտաբար այժմ հազւագիւտ է։ Նայեցէք չորս կողմը և կըտեսնէք որ երեխաներից, մանաւանդ աղջիկներից մեծ մասը, թոյլ, ջղային, ընդունակ շուտ հիւանդանալու և միշտ կարօտ է դեղի. դրանք մեծանալով լինում են նւազ և թոյլ օրիորդներ, յետոյ տկար կին և վերջապէս ընդմիշտ տկար մայր։ Բայց երբ այդ թոյլ և սակաւարիւն երեխին կանոնաւոր մարմնամարզութեամբ պարապեցնէք, նրա կազմւածքը կըվերանորոգւի և հիւանդոտ ու թոյլի տեղ կըդառնան առողջ երեխաներ. բայց դժբախտաբար կանոնաւոր մարմնի շարժողութեան խանգարում է կանացի անբընական հսպուտը։ Բոլոր այդ շրջագգեստները, կորսէտներն և այլն, իրանք իրանց շատ պակասութիւններն են պատճառում մարմնոյն. բացի դրանից նրանք խանգարում են կազմւածքի առողջ զարգացմանը։ Այլկերանց փիզիքական զարգացմանը առանձին ուշադրութիւն հարկաւոր է դարձնել, ինչպէս և նրանց սրտի ու թոքերի վրայ։ Կանանց այդ դործարանները խիստ թոյլ են լինում, բայց պիտի ասել, որ դրանց պատճառը միւս գործարանների ազատ շարժողութիւնից գուրկ լինելն է. սակայն ներկայ մոդաներին նայելով՝ ազատ շարժողու-

թեան մասին մտածել անգամ չի կարելի։ Մի կողմից շրջապտոյտների երկարութիւնը խանգարում է արագ և արձակ կերպով շարժելուն, իսկ միւս կողմից կորսէտը ճնշում է կրծքի վանդակը և չի թողնում առատ օդ ներս ընդունելու և ամբողջ կրծքով շնչելու։ Հետևաբար անկանոն արեան շրջանառարձութիւնը և ճնշուած շարժուածքը գլխաւորապէս ազդում են սրտի գործունէութեան ու մնացած միւս բոլոր գործարանների վրայ։ Մինչև այժմ եղած բազմաթիւ քննութիւնները և հրապարակական բժշկական դասախօսութիւնները բազմիցս մեզ ցոյց են տուել թէ կորսէտի և թէ դրա տէզ սեղմող շորերի վնասակարութիւնները։ Բայց նրանց աշխատանքը ցաւօք սրտի պիտի ասենք, որ քիչ արդիւնք է ունեցել։ Սիրտը և շնչառութեան գործարանները այն ժամանակ միայն կրկազդուրուեն, երբ կըցայտանուի աւելի նպատակայարմար կանացի շոր. վերջինս չըպիտի խանգարէ մինչև անգամ ամենալսոր շնչառութեանը, իրանի շարժուածքը ճընշուած չըպիտի լինի, որը կորսէտ հագնողին միշտ պատահում է։ Զրջազգեստները պիտի ուսերից լինին, գօտիով ամրացրած երբէք չըպիտի լինի. բժ. Մէյներտի հետազօտութիւնից երևում է, որ այդպիսի գօտիները, մանաւանդ կորսէտները շատ են վնասում որովայնի ներքին մասերին։ Սրտի և շնչառութեան գործարանների մըկանունքները նոյնպէս պէտք է մարզել։ Կանայք և աղջիկները պարտաւոր են մկանունքների վարժութիւններով էլ պարապել, եթէ ուզում են, որ սիրտը և թոքերը առողջ լինեն։ Եթէ մեր կանայք և օրիորդները պարապէին մարմնամարզութեամբ այն էլ ազատ օդի մէջ, թոզ հաւատացած լինեն, որ աւելի քան լուրջ օգուտ կըստանային։ Բայց ի հարկէ, միայն թէ չըլսոկնէին երկար շարժուածքից։ Աղջիկներից համար շատ օգտաւէտ է ազատ օդում խաղալը, հետևաբար արագ վազելը, սառցի վրայ սահելը և դեռում լողալը։ Կազմուածքը զարգացնելու հիանալի միջոց է իրան կանոնով վարժուել մարմնամարզական գործիքներով. աղջիկները, որոնք ուսումնարան չեն գնում, կարող են օգտուել իրանց տանը սարքելով այդ գործիքները կշռաքարերով և այլն։ Ցաւալի տեսնում ենք կանայք և աղջկերք, որոնց մէջքի ոսկորը ծռուել է, և մեր վրայ սպասում ողի տպաւորութիւն են թողնում. դա, իհարկէ մկանունքների թուլութիւնից է, որ առաջացած է հարկաւոր չափով շարժողութիւնից դուրկ լինելուց. բայց թէ ինչու մեր մէջ տարածուած չի այդ ամենահարկաւոր բանը—մարմնամարզութիւնը, դա նըրանից է, որ մեզանում ամօթ են համարում կանանց և աղջկերանց համար գբաղել ֆիկիքական մարմնամարզութիւնով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժ Ա. Բուդուղեան հրատարակում է ժողովրդեան մատչելի բժշկականութեան և առողջապահութեան վերաբերեալ գրքոյկներ, շատ մատչելի գներով։ Նորերս նրա լոյս ընծայած ինչ է ս. առակութիւնը՝ գրքոյկը, որ բաղկացած է 73 փոքրադիր երեսներից, տպագրուած Պետերբուրգում շատ մաքուր, գինը 5 կոպ. գիւրըմբռնելի ոճով և համոզեցուցիչ փաստերով խօսում է այդ սխտի մասին, մանաւանդ առանց սիրոյ ամուսնութեան վնասակար լինելուն վրայ երկար կանդ առնելով։ Սերը - ախտաբոյս հոգին է, այո, և նա է միայն կեանքի ուսուցչը։

—Տոհս. Ն. Տաղաւարեան, Պարիզի Պաստորեան ուսումն. վկայեալ մանրէագէտ լոյս է ընծայել Կ. Պոլսում, ուր նա ազգային և ֆրանսիական հիւանդանոցների բժիշկն է, բառացուցած ախտաճանաչ եւ դեղօրեից յատկութեանց ֆրանսերէնից հայերէն։ Տըպարան Յ. Մատթէոսեան, Կ. Պոլիս, 24 փոքրագիր երես, մաքուր տպագրութիւն, գինը 5 դրշ.։

Այլ եւ այլ

Դաշնամուրի վրայ ածելը վնասակար է, ասում է անգլիական թերթերից մէկը։ Բայց այն որ միշտ լսելն էլ է մարդու ջրդերը գրգռում, ուր մնաց էլ ինքը ածողը։ Ես արդէն հաստատուած վստահ է, որ դաշնամուրի վրայ ածող աղջիկները լինում են խոյլ, սակաւարիւն և գունատ։ Յիշեալ թերթը արդէն պարլամենտին առաջարկել է օրէնք մտցնել, որը պաշտպանէ երեխաներին այդ բարբարոսութիւնից և խոյլ չըտան, որ աղջիկներին կարկատրեն ամբողջ ժամանակ նստել դաշնամուրի առաջ և պրդռացնել։

— Ձիճուկ հարբեցողութեան դէմ։ Պէտք է շիճուկի մէջ լցնել 90° սպիրտ և այդ շիճուկը սրսկել հարբեցողի մարմնոյ մէջ, որ ասում են սաստիկ զզւանք կառաջացնի դէպի բոլոր ոգելից խմիչքները։

Սուրհանդակ

Երեւան. Յ. Խ. Ի զուր էք կարծում, որ պաղարիւն մարդիկ չեն կարող ենթարկուել թոքախտի։ Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ ձկները բոլորովին ապատ պիտի համարէին վարակուելուց թոքախտով, մինչդեռ նորագոյն փորձերը ցոյց են տալիս, որ ձկներն էլ հիւանդանում և սատանում են բարակսցաւ։

Թիֆլիս. Մշակին։ Ձեզ չենք ճանաչում մեզ հակառակորդ և այդ իսկ պատճառով կրկնում ենք, որ մեզ ցաւ է սպատճառում մեր **անցպատակ եւ ազգայնասց** վերաբերմունքը դէպի մեր գործիչները։ Զատ անգամ չենք շեշտուն-աշխարայ մեզ յայտնել ենք և այժմս էլ պարտեալ ասում ենք, որ տմարդութիւն, անիրաւութիւն է չըխոսասվանել նոյն իսկ ոխերիմ թշնամու բարեմասնութիւնները, երբ նրա մի ամենափոքր բացասական կէտերը հրապարակի վրայ են գրւում, քննւում, դատապարտւում։ Ձէթէ եւաճ հաւի ճիճաղ են չարուցանում, մեր առանց տրամաբանութեան խօսքերը և պատուհասները, այլ զգւանք։ Ժամանակ է վերջապէս, որ խելքի գաք, պատկառէք և ամաչէք։

Մենք չենք կամենում, որ **Մշակը** կորցնէ իր անունը, այլ փութագում ենք տեսնել այդ թերթը **անուրաս...** Լսում էք—**անուրաս...**

Դուք շարունակում էք ինսուլնացիաներ, զրպարտութիւններ, և որ աւելի զզրելին է, քաջ իմանալով, որ բարեկենդանի պատճառով շաբաթ օրը տպարանում բանում են անկանոն, դուք մի ամբողջ շաբաթ սպասում էք և **Տարազի** №-ը տալելիս միայն մեզ պատասխանում։ (**Աստուած պատասխան հատուի**)։ Խոյս էք տալիս դրած փաստերը ջրելու և միայն գրպարտութիւններ էք անում։ Դուք համարձակւում էք մեզ մեղադրել մի այնպիսի չանցանքի մէջ, որ շատ վաղուց ձեր փեշակն է։ **Տարազը** լրագիր չէ, ուստի նա լուրերն էլ չի հաւանք ունի առնել այս այն աղբիւրից։ Իսկ

դուք չէք ամաչում անհամար բժշկ. նորդներով, շարունակ գողովիւն էք անում ոչ միայն ամենօրեայ տեղական լրագրներից, եւ առանց բացառութեան, միշտ ՀՆԱՅՈՂ լուրեր տալիս ձեր ընթերցողներին, այլ նոյն իսկ և շաբաթաթերթի Տարազից: Հեռու չգնալու համար, պահանջում ենք ձեղանից Տարազի անցեալ կիրակիի (փետր. 20-ին) Գադ. Վարչ. մասին լուրը արտատպել Մշակում և նրան կից էլ արտատպել Մշակի երեքշաբթի օրւայ (փետր. 22) նոյն լուրը, որպէսզի ձեր բազմաթիւ բաժանորդները տեսնեն ձեր անվայել ստոր զրպարտութիւնները և ձեր գողութիւնը:

Գալով Քէչերիաներին, բենզալեաց կրակներին, Ճորապակի նեռ բեւեռացուկ նեմռիի և միաժամանակ այդ վառուող խնճոյքներում շիկ բանացնողին, ձեռքերը խաչած, վիզը ծռած, դա մի այնպիսի շաղկապ է, որ ոչ ոք չի կարող միացնել: Եթէ մեր ձեռքերը խաչած է, վիզը ծռած, ապա ինչպէս ենք բեւեռացուկ նեմռում Ճորապակի նեռ: Ի՞նչպէս ենք շիկեր ածում, Քէչերիաներ ստրոմ, բենզալեաց կրակներով նրագալոյցներ ածում և ձեր ոտակալ սլտերը այրում, խորովում, չարտաես աչքերը քոռացնում...

Բաւական է, ամաչեցէք և ձեռք վերցրէք այդ արտաւար, դէպի անդունդը տանող շաւղից: Պահպանեցէք ձեզ չանձնաւած աւանդը սրբութեամբ, մինչև կը հասնենանան հիմնադրի ժառանգները և կրստանձնեն թանգագին գործը:

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է, թէ նրա դիւանատանը 1900 թւի փետրուարի 29-ին, ժամի 12-ին նշանակւած է աճուրդ, կապալով տալու մի ջրմուղ խողովակի շինութիւն՝ սկսած Վորոնցովի արձանից Նաբերեժնի և Սիմեոնովսկի փողոցներով մինչև Կուր գետը՝ մօտաւորապէս 157 սաժէն երկարութեամբ—4600 րուբլի գումարի: Խողովակների շինութիւնը կարող է տըրւել և մաս-մաս, բայց ոչ պակաս քան 50 սաժէն: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրերը Վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, սկսած ժամը 9 ից մինչև 2-ը:

ԱՒԱԳԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ֆ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներից ընդունում են ամեն օր. բացի կիրակի օրեւից՝

Առաւօտեան ը

Ֆ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.

Կ. Մ. Շիկովանի—9—10 ժ. ալքի, ներքին հետադային հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կ. հ..

Ի. Փ. Պռոտասեւիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին եւ երեխայոց հ.

Ա. Ֆ. Թուրկո—1½—2 ժ. ներքին եւ միզասեռական հ.

Երեկոեան ը

Ի. Փ. Պռոտասեւիչ—5—6 ժ.

Ա. Ն. Զպակովսկի—6—7 ժ. հետադային (էլեկտրաբուժութիւն), վեներ. եւ մաշկի հ.

Ֆ. Ա. Նաւասարդեան—7—7½ ժ.

Տ. Ի. Բուդնկո հիւանդանոցում հիմնական եւ խորհրդատուական հետազոտութիւնն ներ է անում մկի, քթի, ատեան, կաթի եւ այլն:

Վճար 50. կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Առաջնակի—պարապում է ամեն ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ եւ մարգելով. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
(Սոլոլակ, Սեդեւսկայեա փող. № 10)

Բկի, կոկորդի, քթի եւ ականջի հիւանդութիւնների համար ընդունում է,
Առաւօտեան 9 ժ.—11 ժ.
Երեկոեան 5 ժ.— 7 ժ.
(տր.)

Ատամնաբուժարան
Ի. Ա. ՖՐԱՆԿԻ

Երեւանեան հրապարակ, տուն Արղութեան-Երկայնաբազուկի, Մուզիկալնի ուսումնարանի կարգում. լցնում, բժշկում և գնում է արհեստական ատամներ: Հիւանդներին ընդունում է առ. ժ. 9-ից մինչև երեկ. ժամի 7-ը: (տր.)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԴՕԿՏՈՐ ԹԱԹՈՒՍ

Կատակ—վոդեւիլ 1 արարւածով, հեղինակ. Իւան Զէյդլովի. փոխադր. Ս. Սարդարեան-Արեւշատեանի.
Գինը 20 կոպ.
3—3

ХВОЙНАЯ ЭССЕНЦІЯ
С.-Петербургской
ТЕХНО-ХИМИЧЕСКОЙ ЛАБОРАТОРІИ
Здоровое комнатное дезинфекціонное средство, распространяетъ пріятный, бальзамическій запахъ хвойнаго лѣса.
На каждомъ флаконѣ требовать собственно-ручную подпись красными чернилами провизора
РАФАИЛА ЭЛІАШЕВА
Главный Складъ:
С.-Петербургъ, Коломенская, д. № 12
Продается вездѣ. 13—7 М. 57078

Լոյս տեսաւ
Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
ԻՆԱՄ
Պատկերազարդ պատմական տետրիւն
Գինը 30 կոպ.
Վաճառւում է Կենդրոնական գրավաճառանոցում և Տարազի խմբագրատանը: 15—15

ВСѢ ДАМЫ
Лучшаго общества употребляютъ для лица химически чистую гигіеническую пудру
ТѢА ГИГІЕНА.
ПУДРА „ГИГІЕНА“
Совершенно безвредна, прекрасно и незаметно пристаетъ, придаетъ кожѣ пріятную нѣжность и белизну.
Продажа при складахъ С.-Петербургской Техно-Химической Лабораторіи.
Главный Складъ:
С.-Петербургъ. Коломенская. д. № 12
Продается вездѣ 18—8 М. 57110

Լոյս տեսաւ
«ՋԻԱՆՈՒ ՔՆԱՐԸ»
Նոր հրատարակութեան հատոր I.
«Ժամանակակից կեանքը»
Բաժանորդագրութիւնը շարունակւում է. տասը հատորը յաւելւածի հետ 3 րուբլի, տպագրութիւնից յետոյ 5 րուբ. հատով վաճառւում է 50 կ: Ստորագրել կարելի է Թիֆլիսում բացառապէս Կ. Մարտիրոսեանցի տպարանում (Օրբէլեան փողոց): Սրամուրի տակ է հատոր II.
«ՀԱՅԻ ԴՈՒՌԸ» 5—3

Журналъ литературно-художественный и сатирическій съ каррикатурами

„РАЗВЛЕЧЕНІЕ“.

„Развлеченіе“ вступаетъ въ 42-й годъ своего существованія. **„Развлеченіе“ въ 1900 г. дастъ своимъ подписчикамъ:**

Пятьдесятъ номеровъ журнала, въ которыхъ будетъ помѣщено болѣе 1,800 прекрасно исполненныхъ рисунковъ: перомъ, карандашомъ и въ краскахъ извѣстныхъ каррикатуристовъ-художниковъ. Литературный отдѣлъ будетъ вмѣщать въ себѣ массу художественныхъ повѣстей, разсказовъ, сценъ, очерковъ, стихотвореній и всякаго рода сатирическихъ и юмористическихъ мелочей, дающихъ полную картину нравовъ современнаго общества столицъ и провинцій.

Между прочимъ, въ теченіе 1900 года будутъ печататься:

1. **„Разсудку вопреки, на перекоръ стихіямъ“.** Юмористическій романъ изъ московской и провинціальной жизни (съ прологомъ, эпилогомъ, налогомъ, подлогомъ, залогомъ и пр.). А. А. Осипова.

2. **На кладбищѣ потерянныхъ разсудковъ.** (Очерки, разсказы, сцены и типы изъ быта сумасшедшихъ). П. В. За—ва.

3) **Юмористическій словарь** всѣхъ выдающихся современныхъ дѣятелей большихъ провинціальныхъ городовъ, какъ-то: Н.-Новгорода, Кіева, Казани, Харькова, Саратова и др.

(Особо для обозрѣнія городовъ будетъ командированъ спеціальный корреспондентъ маіоръ **Полѣновъ.** Онъ посѣтитъ города: Калугу, Тверь и Рязань—въ январѣ; Ростовъ, Ярославль и Вологду—въ февралѣ; Владиміръ, Иваново-Вознесенскъ и Нижній-Новгородъ—въ мартѣ; Серпуховъ, Орелъ, Мценскъ и Курскъ—въ апрѣлѣ. О посѣщеніи другихъ городовъ будетъ объявлено въ свое время).

4) Если въ журналѣ „Нива“ въ 1900 году будетъ печататься романъ **графа Л. Н. Толстого „Воскресеніе“**, въ журналѣ „Развлеченіе“ будетъ печататься, по примѣру прошлаго года, романъ **графа Худого „Понедѣльникъ“.** Если въ „Нивѣ“ не будетъ и въ „Развлеченіи“ не будетъ. (Всѣ годовые подписчики 1900 г. **безплатно** получатъ 1-ю и 2-ю части ром. **„Понедѣльникъ“**, который вышелъ отдѣльнымъ изданіемъ). Всѣ **годовые** подписчики получатъ премію:

„Не хочешь, да хохочешь“

(большой художественный альбомъ, заключающій въ себѣ около 100 каррикатуръ въ краскахъ: пародіи на пѣсни, романсы, стихотворенія, серенады, стансы, октавы и пр.).

Годовая цѣна журнала **шесть рублей,** съ преміями **семь рублей**

Допускается разсрочка: при подпискѣ **три рубля,** въ мартѣ **одинъ рубль,** въ апрѣлѣ **одинъ рубль** и въ маѣ **одинъ рубль.**

(Пробный № высылается за три семикопѣечныя марки). Адресъ: Москва, журналу „Развлеченіе“. Кромѣ этого, годовые подписчики имѣютъ возможность получить по удешевленной цѣнѣ преміи прошлыхъ лѣтъ:

1) Художественный альбомъ въ краскахъ: „Царь Ѳеодоръ Іоанновичъ“. Трагедія А. К. Толстого (12 картинъ). 2 рубля.

2) **Пушкинскій номеръ** (въ изящной раскрашенной оберткѣ, заключаетъ въ себѣ текстъ, относящійся къ жизни и смерти поэта. Между прочимъ, въ немъ напечатанъ драматическій этюдъ С. С. Мамонтова «Смерть Пушкина», нѣсколько снимковъ съ рѣдкихъ портретовъ поэта, писанныхъ съ него въ разное время извѣстными художниками того времени. Четыре портрета героевъ «Евгеній Онѣгинъ» изъ стариннаго изданія Смирдина. Портреты эти одобрены были въ свое время самимъ Пушкинымъ) 25 к

3) Полное собраніе сочиненій популярнаго юмориста **А. ПЕдро** (А. П. Подурова). 1 р.

4) Юбилейный альбомъ «Развлеченія» за 1898 г. въ изящной обложкѣ, заключающій въ себѣ портреты сотрудниковъ, 8 картинъ исполненныхъ красками, разсказы, сцены, очерки, стихотворенія, мелочи и пр. **50 коп.**

Можно почтовыми марками, наложеннымъ платежомъ редакція не высылаетъ.

XX „КАСПІЙ“ XX

Въ 1900 году „Каспій“, въ Баку, будетъ выходить ежедневно по прежней программѣ газеты литературной, общественной и политической, съ обширнымъ нефтянымъ отдѣломъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Съ дост.	Съ перес.
За одинъ годъ	7 р.	8 р. 50 к.
» 6 мѣсяцъ.	4 »	5 » — »
» 1 мѣсяцъ	1 »	1 » 50 »

Заграницу на годъ 13 р. за полгода 7 руб.

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится не менѣе 3 руб. городскими и 4 руб. 50 коп. иногородними подписчиками; затѣмъ 15-го февраля—2 руб. и 15-го марта—2 руб.

Иногородніе адресуютъ свои требованія: въ Баку, въ редакцію газ. «Каспій».

Подписка принимается: въ **Баку**—въ конторѣ газеты, Николаевская ул., д. Тагіева; въ **Тифлисѣ**—въ книжномъ магазинѣ Хиддекеля; въ Батумѣ—при книжно-газетномъ агентствѣ М. Николадзе; въ Москвѣ—въ конторѣ т./д. Метцель и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ столицъ и провинціи.

Дозв. ценз. Тифлисъ, 27-го февраля 1900 г. Типъ К. И. Мартиросіанца Орбел. ул., № 1–2